ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ֆ Ր Ա Ն Ս Ե Ր Ե Ն

2015 Թ. ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ, ՄԻԱՍՆԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ (ԲԱՆԱՎՈՐ) ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

ԵՐԵՎԱՆ 2014

Պատասխանատու՝ ԱՐԵՎԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Գնահատման և թեստավորման կենտրոնը շնորհակալություն է հայտնում ՀՀ բուհերի ֆրանսերենի ամբիոններին, ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտին, ուսուցիչներին և բոլոր շահագրգիռ անձանց՝ ուղեցույցի նախագծի վերաբերյալ հայտնած կարծիքների, ներկայացրած առաջարկությունների և դիտողությունների համար, որոնք հաշվի են առնվել ուղեցույցի սույն տարբերակում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան.....4

2. Թեստի կառուցվածքը.....5

3. Թեստի առաջադրանքների բովանդակային և կառուցվածքային տեսակների համամասնությունը……..…6

4. Առաջադրանքների կառուցվածքային տեսակները, գնահատման չափանիշները և ձևաթղթի լրացման կարգը……...8

5. Առաջադրանքներում ընդգրկվող նյութը.....15

6. Կենտրոնացված (բանավոր) քննության պահանջները և գնահատման չափանիշները.....17

7. Պատասխանների ձևաթղթի նմուշը.....19

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված է 2015 թ. պետական ավարտական և միասնական քննությունների թեստերի նոր կառուցվածքը, տրված են առաջադրանքների թեմատիկ, բովանդակային և կառուցվածքային տիպերի համամասնությունը, առաջադրանքների կառուցվածքային տիպերը, դրանց լուծման եղանակների և պատասխանների ձևաթուղթը լրացնելու կարգի բացատրությունները, առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները, պատասխանների ձևաթղթի նմուշը, կենտրոնացված (բանավոր) քննության պահանջները և գնահատման չափանիշները:

Պետական ավարտական և միասնական քննությունների թեստերը և կենտրոնացված (բանավոր) քննությունների հարցաթերթերը կազմվում են համաձայն ուղեցույցի:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Քննական թեստը բաղկացած է **Ա** և **Բ** մակարդակներից և պարունակում է 17 առաջադրանք՝ 80 ենթաառաջադրանքով:

Ա մակարդակի առաջադրանքները (1-50)վերաբերում են ավարտական քննությանը և միասնական քննության ավարտական մասին: Միասնական թեստը ներառում է Ա և Բ մակարդակները(1-80):

Բուհ ընդունվելու համար միասնական քննության միավորը հաշվարկվում է 20 միավորանոց սանդղակով՝ հիմնվելով ամբողջ աշխատանքի (Ա և Բ մակարդակների) կատարման արդյունքում դիմորդի հավաքած միավորների վրա:

Շրջանավարտի ավարտական գնահատականը որոշվում հատուկ ավարտական մասի համար նախատեսված 20 միավորանոց սանդղակով, որը տեղակայված է ԳԹԿ կայք էջում (atc.am):

Թեստային առաջադրանքներն ունեն հետևյալ 2 կառուցվածքային տիպերը՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ և կարճ պատասխանով առաջադրանքներ: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում 1 միավոր: Թեստի ընդհանուր միավորն է 80:

Ա մակարդակի առաջադրանքների կատարման համար հատկացվում հատկացվում է 90 րոպե: Ա և Բ մակարդակների առաջադրանքների կատարման համար՝ 150 րոպե:

ԹԵՍՏԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՏԵՍԱԿԸ	ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՊԱՀԱՆՋԸ	ԵՆԹԱԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ	ՄԻԱՎՈՐԸ
Ա ՄԱԿԱՐԴԱԿ			
ԸՆՏՐՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	I. Կարդալ տեքստը և նշել ճիշտ պատասխանը:	5	5
	II. Ընտրել նախադասության շարունակությունը:	5	5
	III. Ընտրել նախադասության սկիզբը:	5	5
	IV. Տեքստի բացթողումները լրացնելու համար նշել տրված բառաքերականական տարբերակներից ճիշտը:	15	15
	V. Գտնել նախադասության ընդգծված անդամին վերաբերող հարցը:	6	6
	VI. Գտնել դերանունով փոխարինված բառը:	6	6
ԿԱՐՃ ՊԱՏԱՍԽԱՆՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	VII. Գտնել այն երկու գոյականները, որոնք կարող են գործածվել տվյալ ածականի հետ:	3	3
	VIII. Կազմել նախադասություն՝ վերադասավորելով տրված միավորները:	3	3
	IX. Համապատասխանեցնել տրված բառերն ու բառակապակցությունները և դրանց թարգմանությունները (տրված տարբերակներից մեկն ավելորդ է):	2	2

Բ ՄԱԿԱՐԴԱԿ			
ԸՆՏՐՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆՈՎ ԱՌԱՁԱԴՐԱՆՔՆԵՐ	X. Կարդալ տեքստը և նշել ճիշտ պատասխանը:	5	5
	XI. Ընտրել այն նախադասությունները, որոնք համապատասխանում են բաց թողնված հատվածներին:	2	2
	XII. Տրված 4 նախադասություններից մեկը սխալ է: Նշել, թե որ նախադասության մեջ կա՝ I. շարադասության սխալ, II. անուղղակի խոսքում սխալ, III. նախդրի գործածության սխալ, IV. ցուցական դերանվան գործածության սխալ, V. հարաբերական դերանվան գործածության սխալ:	5	5
	XIII. Ընտրել համապատասխան տարբերակը:	3	3
	XIV. Ընտրել համապատասխան թարգմանությունը:	3	3
ԿԱՐՃ ՊԱՏԱՍԽԱՆՈՎ ԱՌԱՁԱԴՐԱՆՔՆԵՐ	XV.Վերականգնել նախադասություն-ների ճիշտ հերթականությունը:	4	4
	XVI. Ընտրել այն երեք նախադասությունները, որոնք կարող են դրվել կրավորական սեռով:	4	4
	XVII. Տեղադրել բառերը տեքստի բովանդակությանը համա-պատասխան (տրված բառերից երկուսն ավելորդ են):	4	4
ԸՆԴԱՄԵՆԸ	17	80	80

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Թեստի կառուցվածքը

1. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ.

Ա մակարդակում 1-42 և Բ մակարդակում 51-68 ենթաառաջադրանքներն ընտրովի պատասխանով առաջադրանքներ են:

Կառուցվածքը: Տրվում են պատասխանի չորս տարբերակներ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Նմուշ.

Tout peintre voudrait …

a. d'être exposé au Louvre.
b. que ses tableaux soient exposés au Louvre.
c. que le musée est fermé.
d. tourner un film patriotique.

Ձևաթղթում լրացման կարգը: Ընտրված տարբերակի համարին համապատասխանող վանդակում, դրվում է «X» նշանը.

	5	6	7	8
a				
b	X			
c				
d				

Գնահատման չափանիշը: Ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

2. Կարճ պատասխանով առաջադրանքներ.

Ա մակարդակում 43-50-րդ և Բ մակարդակում 69-80-րդ ենթաառաջադրանքները կարճ պատասխանով առաջադրանքներ են:

Կառուցվածքը: Տրվում է որևէ նյութ՝ բառաշարք, նախադասություն, տեքստ և այլն. տվյալ նյութի վերաբերյալ ձևակերպվում է պահանջը կամ հարցը, որի պատասխանը կարող է լինել մեկ կամ մի քանի թիվ:

Ներկառուցվածքային տարատեսակները:

- *Համարների ընտրությամբ առաջադրանքներ:*

Ա մակարդակում 43-48-րդ և Բ մակարդակում 69-76-րդ ենթաառաջադրանքները համարների ընտրությամբ առաջադրանքներ են: Անհրաժեշտ է ընտրել և գրել պահանջին համապատասխանող համարները:

Ա մակարդակ

Յուրաքանչյուր ենթաառաջադրանքում տրվում է 1 ածական և 5-ական գոյական. անհրաժեշտ է գտնել այն երկու գոյականները, որոնք կարող են գործածվել տվյալ ածականի հետ:

Նմուշ.

belle
1. paysage, 2. vue, 3. poème, 4.musique, 5.fleurs.

Ձևաթղթում լրացման կարգը: Պատասխանը թվերի շարք է, <u>որում թվերի հերթականության պահպանումը պարտադիր չէ:</u> Տրված վանդակներից յուրաքանչյուրում պետք է գրել մեկ թիվ:

Տրված նմուշի ճիշտ պատասխանը կլինի.

2	4			

Գնահատման չափանիշը: Ճիշտ և լիարժեք (եթե նշված են պահանջին համապատասխանող բոլոր բառերի համարները) պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ կամ թերի պատասխանի, ինչպես նաև պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Բ մակարդակ

Տրված է 5 նախադասություն, պետք է ընտրել այն երեք նախադասությունները, որոնք կարող են փոխակերպվել կրավորական սեռի:

1. On vient d'annoncer cette nouvelle à la radio.
2. Il est resté plusieurs années à l'étranger.
3. Il a beaucoup d'esprit.
4. La Croix-Rouge secourait tous les sinistrés.
5. Nous aimons toujours ceux qui nous admirent.

Հնաթղթում լրացման կարգը: Պատասխանը թվերի շարք է, որում **թվերի հերթականության պահպանումը պարտադիր չէ:** Տրված վանդակներից յուրաքանչյուրում պետք է գրել մեկ թիվ:

Տրված նմուշի ճիշտ պատասխանը կլինի.

1	*4*	*5*		

Գնահատման չափանիշը: Ճիշտ և լիարժեք (եթե նշված են պահանջին համապատասխանող բոլոր բառերի համարները) պատասխանի համար տրվում է մեկ միավոր,

սխալ կամ թերի պատասխանի, ինչպես նաև պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Ա մակարդակ

Տրված են առանձին միավորներ, որոնք անհրաժեշտ է դասավորել այնպես, որ ստացվի քերականորեն ճիշտ կազմված նախադասություն:

1. de Paris, 2. multicolores 3. les oiseaux, 4. remplissaient, 5. le ciel bleu

Ձևաթղթում լրացման կարգը: Պատասխանը թվերի շարք է, **որում թվերի հերթականության պահպանումը պարտադիր է:** Տրված վանդակներից յուրաքանչյուրում պետք է գրել մեկ թիվ:

Տրված նմուշի ճիշտ պատասխանը կլինի.

3	2	4	5	1

Գնահատման չափանիշը: Ճիշտ և լիարժեք (եթե նշված են պահանջին համապատասխանող բոլոր բառերի համարները) պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ կամ թերի պատասխանի, ինչպես նաև պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Բ մակարդակ

Տրված տեքստում նախադասությունների ճիշտ հերթականությունը խախտված է: Անհրաժեշտ է վերականգնել տեքստը՝ պահպանելով նախադասությունների տրամաբանական կապը:

1. - Ah oui, en effet, vous avez raison, je suis désolé.
2. - Excusez-moi, mais je crois qu'il y a une erreur dans l'addition.
3. - Ça ne fait rien, tout le monde peut se tromper.
4. - Vous permettez, monsieur, je vérifie.
5. - Allez-y, je vous en prie.

Ձևաթղթում լրացման կարգը: Պատասխանը թվերի շարք է, **որում թվերի հերթականության պահպանումը պարտադիր է:** Տրված վանդակներից յուրաքանչյուրում պետք է գրել մեկ թիվ՝ ըստ իմաստային համապատասխանության:

Տրված նմուշի ճիշտ պատասխանը կլինի.

2	4	5	1	3

Գնահատման չափանիշը: Ճիշտ և լիարժեք (եթե նշված են պահանջին համապատասխանող բոլոր բառերի համարները) պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ կամ թերի պատասխանի, ինչպես նաև պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

- **Համապատասխանեցմամբ առաջադրանքներ:**

Ա մակարդակում 49-50-րդ և Բ մակարդակում 77-80-րդ ենթաառաջադրանքները համապատասխանեցմամբ առաջադրանքներ են:

Ա մակարդակ

Ամեն ենթաառաջադրանքում սյունակով տրվում է չորսական բառ կամ բառակապակցություն: Անհրաժեշտ է ձախ սյունակում տրված յուրաքանչյուր բառի կամ բառակապակցության համար ընտրել աջ սյունակում առաջարկված թարգմանություններից որևէ մեկը (տրված տարբերակներից մեկն ավելորդ է):

a. prendre des notes	1.փոխադարձ համաձայնության գալ
b. avoir honte	2. ապրուստը վաստակել
c. gagner sa vie	3. ափ հասնել
d. gagner la côte	4. նշումներ կատարել
	5. ամաչել

Ձևաթղթում լրացման կարգը: Յուրաքանչյուր տառի ներքևի վանդակում պետք է գրել տարբերակի համարը՝ ըստ իմաստային համապատասխանության:

Տրված նմուշի ճիշտ պատասխանը կլինի.

a	b	c	d
4	5	2	3

Գնահատման չափանիշը: Ճիշտ և լիարժեք (եթե նշված են պահանջին համապատասխանող բոլոր բառերի համարները) պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ կամ թերի պատասխանի, ինչպես նաև պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Բ մակարդակ

Տրվում է տեքստ, որում բաց են թողնված բառեր, որոնք համարակալված են. պահանջվում է գրել բաց թողնված բառերի համարների հերթականությունը տեքստի բովանդակությանը համապատասխան (տրված բառերից երկուսն ավելորդ են):

Les principes de Liberté, Égalité, Fraternité constituent la ...a... de la République Française et sont inscrits comme tels dans la ...b... française. Cette devise est un héritage de la Révolution Française. Les révolutionnaires de 1789 l'utilisent comme formule ...c... . Elle est officiellement adoptée comme devise de la République à la ...d... du XIXème siècle.

1. fin, 2. devise, 3. monde, 4. constitution, 5. paix, 6. républicaine

Ձևաթղթում լրացման կարգը: Յուրաքանչյուր տառի ներքևի վանդակում պետք է գրել տարբերակի համարը՝ ըստ իմաստային համապատասխանության: Տրված վանդակներից յուրաքանչյուրում պետք է գրել մեկ թիվ: Տրված նմուշի ճիշտ պատասխանը կլինի.

a	b	c	d
2	4	6	1

Գնահատման չափանիշը: Ճիշտ և լիարժեք (եթե նշված են պահանջին համապատասխանող բոլոր բառերի համարները) պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ կամ թերի պատասխանի, ինչպես նաև պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Ձևաթղթում սխալ նշված պատասխանները փոխելու համար տրված է 5 հնարավորություն. 2-ը ընտրովի պատասխանով առաջադրանքների համար, 3-ը՝ կարճ պատասխանով առաջադրանքների:
Ընտրովի պատասխանով առաջադրանքների պատասխանը փոխելու համար վերևի 2 մեծ վանդակներում գրվում է տվյալ ենթաառաջադրանքի համարը և սյունակի համապատասխան վանդակում դրվում է «X» նշանը:



Կարճ պատասխանով առաջադրանքի դեպքում համապատասխան տեղում գրվում է տվյալ ենթաառաջադրանքի համարը և լրացվում են թվերը:



Թեստի ամբողջական նմուշը կտեղադրվի atc.am կայքում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ: Ընդհանուր տեղեկություն բառակազմական հիմնական միջոցների՝ բառածանցման և բառաբարդման մասին:

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ: Պարզ նախադասություն (բայական և անվանական ստորոգյալով), être բայը որպես հանգույց, շրջադասումով կամ est-ce que-ով կազմված հարցական նախադասություններ, ժխտական նախադասություններ և դրանց կազմությունը, հարցական բառերով կազմված նախադասություններ: Բարդ ստորադասական և բարդ համադասական նախադասություններ: Ուղղակի և անուղղակի խոսք:

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ:

Գոյական անուն. թիվ (հոգնակի թվի կազմությունը), սեռ (իգական սեռի կազմությունը):

Հոդ. Որոշիչ (le, la l’, les), անորոշ (un, une, des), միաձուլված (du, des, au, aux), մասնական (du, de la, de l’) հոդեր: Հոդի բացակայության դեպքերը:

Ածական անուն. Որակական և հարաբերական ածականների սեռը, թիվը (հոգնակի թվի և իգական սեռի կազմությունը) և որակական ածականների համեմատության աստիճանները: Ցուցական, ստացական և անորոշ դերանվանական ածականներ:

Թվական անուն. Քանակական և դասական թվականներ:

Դերանուն. Անձնական, ցուցական, հարաբերական, ստացական և անորոշ դերանուններ: En և y դերանունների գործածությունը:
ԲԱՅ: Բայի հիմնական ձևերը, կանոնավոր և անկանոն բայեր, անցողական և անանցողական բայեր, լիիմաստ բայեր, օժանդակ բայեր, բայ-հանգույց:

Բայի եղանակը (Indicatif, Conditionnel, Subjonctif, Impératif), սեռը (voix ou forme active et passive):
Դերանվանական բայերի գործածությունը:
Բայի անդեմ ձևերը (Infinitif, participe présent, participe passé, gérondif):

Մակբայ. Մակբայների տեսակները: Ձևի մակբայների համեմատության աստիճանները: En-ի, y-ի գործածությունը մակբայաբար:

Նախդիր. Ամենագործածական à, de, en, dans, par, pour, contre, entre, parmi, sur, sous, avec, sans, avant, après, devant, derrière, depuis, vers, chez նախդիրները:

Շաղկապ. համադասական և ստորադասական շաղկապներ:

ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ (ԲԱՆԱՎՈՐ) ՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Բանավոր քննության նպատակն է ստուգել դիմորդի լեզվական գիտելիքները և հաղորդակցական հմտությունները:

Բանավոր քննության հարցատոմսը բաղկացած է 2 հարցից.

1. Կարդալ, թարգմանել և պատասխանել հարցերին:

2. Զրույց առաջադրված թեմայով:

Բանավոր քննության պահանջներն են՝

1. Կարդալ ադապտացված գեղարվեստական գրքից մի հատված՝ դրսևորելով ընթերցանության կանոնների համապատասխան իմացություն և հնչյունաբանական գիտելիքների գործնական կիրառման հմտություններ: Բառարանի օգնությամբ գրավոր թարգմանել հատվածի նշված մասը, պատասխանել հատվածի բովանդակությանն ուղղված հարցերին:
2. Քերականորեն ճիշտ ձևակերպելով և տրամաբանորեն զարգացնելով մտքերը՝ զրուցել հետևյալ թեմաների շուրջ.

1. La République d’Arménie.
2. Ma ville natale, mon village natal.
3. La France.
4. Erévan – capitale de la République d’Arménie.
5. Les grands hommes de la France, leurs œuvres.
6. Faites le portrait physique et moral des membres de votre famille. Parlez de leurs occupations.
7. Décrivez votre quartier et la maison où vous habitez.
8. Faites le portrait physique et moral de votre ami(e) et parlez de ses préférences.
9. Un événement inoubliable.
10. Parlez de votre école, de vos études et de vos professeurs.

11. Parlez de vos activités quotidiennes et de vos loisirs.
12. Parlez d'un écrivain français et de son œuvre que vous préférez.
13. Parlez des fêtes et de celle que vous préférez.
14. Parlez de vos vacances d'été.
15. Au supermarché.
16. Parlez de vos vacances d'hiver.
17. Parlez de vos distractions artistiques et de celle que vous préférez (théâtre, opéra, cinéma, télévision).
18. Parlez d'un voyage ou d'une excursion.
19. Les sports d'été et d'hiver.
20. Les repas.
21. Décrivez les saisons de l'année dans votre ville ou village.
22. Parlez d'un anniversaire.
23. Paris – capitale de la République française.
24. La jeunesse d'aujourd'hui, ses occupations, ses préférences, ses loisirs.
25. Les bibliothèques et la lecture.

Բանավոր քննությունը գնահատվում է հետևյալ չափանիշներով՝

- Ընթերցանություն 0-5 միավոր
- Թարգմանություն 0-5 միավոր
- Ընթերցված տեքստի ընկալում 0-5 միավոր
- Բանավոր հաղորդակցում 0-5 միավոր

Բանավոր քննությունը գնահատվում է 20 միավորանոց սանդղակով:
Գնահատականի բողոքարկման դեպքում դիմորդին տրվում է 5 նախադասություն հայերենից ֆրանսերեն թարգմանելու համար:

2015թ. միասնական քննություն

Պատասխանների ձևաթուղթ

Ֆիզիկաներեն

ազգանուն

անուն հայրանուն

անձնական համար

Եկե՛ք ուշադիր

* Լրացրե՛ք միայն սև գելային գրիչով:
* Ընտրովի պատասխանով առաջադրանքներում Ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրե՛ք X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):
* Թվերը գրե՛ք հետևյալ տեսքով 1 2 3 4 5 6 7 8 9 0

0 8

Թեստ № 1 2 3 4

Ա մասնաբաժին

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Պատասխանի հանգը

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
a																						
b																						
c																						
d																						

	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42	
a																					a
b																					b
c																					c
d																					d

Կարճ պատասխանով առաջադրանքներ

43						46						
44						47						
45						48						

	A	B	C	D
49				
50				

Բ մասնաբաժին

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Պատասխանի հանգը

	51	52	53	54	55	56	57	58	59	60	61	62	63	64	65	66	67	68	
a																			a
b																			b
c																			c
d																			d

Կարճ պատասխանով առաջադրանքներ

69						73						
70						74						
71						75						
72						76						

	A	B	C	D
77				
78				
79				
80				

Ամբողջ ձևաթղթում սխալ նշված պատասխանները փոխելու տեղը

Ընտրովի պատասխան

a			
b			
c			
d			

Կարճ պատասխան

	A	B	C	D

Լրացրե՛ք այս նախադասությունը՝

Ծանոթ եմ քննության կարգին: